

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

Զենոպ Բահանայ Նալպանտեան



ՃՇՄԱՐԻՏ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

«Գեղեցիկ
վանդակը
չի կերակրեր
թռչունը»:

Հարստություն հասկացողությունը բարդ է ու բազմաձայլ: Անթի ու անհամար գրություններ այս նիւթը արծարծած են տարբեր տեսանկյուններէ ու հասած զանազան եզրակացություններու: Տիրական է այն կարծիքը, որ նիւթը գերազանցած է ամէն ինչ և իր իշխանութեան ներքեւ պահած մարդկությունը:

Հոգեւոր-բարոյական մօտեցումը այն է, որ նիւթին իշխանությունը բացարձակ չէ, այլ՝ կարելորդ մէկ մասը կը կազմէ մարդկային կեանքին:

Հարստությունը կեանքին մէջ երկու տեսակ է՝ նիւթական և հոգեկան: Նիւթական հարստությունը կրնայ ըլլալ վաղանցիկ ու անկարելորդ: Հոգեկանն է յաւերժական, վասնզի կը պարփակէ բազմաթիւ գեղեցկություններ ու մշտական արժէքներ: Հշմարիտ հարստությունը չի չափուի նիւթականի կուտակումով, այլ՝ անոր զգոյշ ու խոհեմ գործածութեամբ: Դրամը իմաստաւորել և արժեւորել է պէտք, այլապէս ան կը դառնայ միսիայն մեր հաճոյքներուն համար վատնուող վտանգաւոր միջոց: Դրամը լոկ միջոց է մեր նպատակին հասնելու համար: Մարդը ի՞նք պէտք է զանազանություն դնէ կարելորդ ու անկարելորդ իրերու մէջ:

Հարստությունը, անտարակոյս, մարդու կը պարզել մտքի ու մարմնի հանգստություն, ապահովություն, ինքնավստահություն, ազատություն, անկախություն:

Անշուշտ լաւ գագացում է գերծ ըլլալ կեանքի առօրեայ մտահոգություններէն ու կենցաղային դժուարություններէն, բայց երազել նման երանական վիճակ, լոկ ցնորք է: Սակաւք միայն ձեռք պիտի ձգեն կեանքը վայելելու առանձնաշնորհումը, վասնզի «տառապանքը, վիշտը՝ ցար, և արտասուքը մարդկային կեանքի անբաժան ընկերներն են»: Չկայ մարդ որ արցունք չտեսնէ ու կեանքի

դառնությունը չճաշակէ: Աւետիք Իսահակեան շատ ճիշդ գրած է. «Այն աչքը, որ արցունք չի տեսել, կեանքից ոչինչ չի հասկացել»: Ուրեմն վիշտն է որ բուն մարդը յառաջ կը բերէ մեր մէջ, և աղքատությունը մեզի շատ բան կը սորվեցնէ: Ժողովուրդը տեղին ըսած է. «Աղքատությունն ինձ ունեցայ ուսուցիչ, և ան ինձի շատ բան ուսոյց»: Հարկ է հետեւաբար, վիշտէն օգտուիլ լաւագոյնս և սորվիլ կենաց արժէքաւոր դասը: Վիշտին հետեւանքները, զարմանալիօրէն, կրնան ըլլալ բարերար և օգտակար: Տառապանքի մէջ դասեր կան, որոնք կրնան մարդս հիմնովին փոխել ու պայծառակերպել: Անգլիացի անուանի բանաստեղծ Լորտ Պայրոն (1788-1824) ատենօք ըսած է. «Տառապանքը դէպի ճշմարտություն տանող առաջին ճամբան է»:

Իմաստասէրները մեզի կը յիշեցնեն որ ճշմարիտ հարստություն կայ ոչ միայն գիտելիք ամբարելու, այլեւ՝ բաշխելու մէջ: Շատեր օրըստօրէ կը հարստանան միայն ու միայն տալով, լոյս սփռելով, իմաստություն ձառագայթելով, իսկ ուրիշներ կ'աղքատանան՝ պահելով: Հոգեկան խորունկ գոհացում կայ տալու մէջ: Այսպէս, ուսուցիչը իր գիտելիքը կը կրկնապատկէ տալով, դաստիարակն ու մանկավարժը՝ կրթելով և ուսուցանելով, գիտունը՝ ստեղծելով, բարերարը՝ նուիրելով, մշակը՝ անխոնջ վաստակելով: Բանքարաթաքոյցն է միշտ աղքատը, խեղճը, արգահատելին: Բանքարաբաշխը միշտ ալ հարուստ է իր անսպառ ու անծայրածիր գիտելիքներով: Մեր տէրը՝ Քրիստոս, իր ցորենի օրինակով ցոյց տուաւ որ առանց մահի, այսինքն առանց զոհաբերութեան ու ծանր աշխատանքի, հատիկը կը մնայ միայնակ, իսկ եթէ մահանայ՝ բազում արդիւնք կ'առնէ: Գիտակից մարդը եւս կոչուած է ցոյց տալու որ ան մոմի նման հալելով միայն կրնայ լուսատուել իր բոլորտիքը:

Արդարեւ, ճշմարտօրէն հարուստ են այն անհատները, որոնք անսակարկ ու անձնութիւնաբար պատրաստակամ են իրենց գիտելիքները հաղորդելու, ժամանակը տրամադրելու և հանգիստը զոհաբերելու իրենց նմաններու:

Առատաձեռն ըլլալը ուրեմն հազուագիւտ առաքինություն մըն է: Մարդկանց կարելի է ճանչնալ իրենց առաքինություններով ու բարեյատկություններով: Զգոյշ պէտք է ըլլալ սակայն առաքինութեան ցուցադրութենէն: Ֆրանսացի եկեղեցական քարոզիչ ու հռետոր Ժազ-Պենինըր Պոսսէ (1627-1704), հրախշալի խօսք մը ունի այս ուղղութեամբ. «Այն առաքինությունները, զորս ցոյց տալ կ'ուզէ մարդ, սին ու կեղծ առաքինություններ են»: Խոհեմություն է ու համեստություն

առաքինությունները երեւան չհանել ի ցոյց մարդկան:

Հշմարիտ հարստութիւնը կը կայանայ զայն զգուշօրէն ու խոհեմաբար գործածելու մէջ: Իրօք որ հարուստ է այն միտքը, որ իր ունեցածը գիտէ գործածել պատշաճօրէն: Հարուստ է այն սիրտը, որ բարութեամբ լեցուն է ու այդ է միայն որ կը սերմանէ, կը քարոզէ: Հոգով հարուստը չգրադիր մարդկային ճղճիմ հարցերով ու իր թանկագին ժամանակը չի մսխեր ունայն խօսքերով ու ջնին երետոյթներով. ընդհակառակը, ան կը հարստացնէ ու կ'իմաստատորէ իր բովանդակ կեանքը սիրոյ ծառայութեամբ ու վեհ գաղափարա-խօսութեանց տարածմամբ:

Ինչքան անմեղ ու բիրեղ հոգիներ կան թաղուած, որոնց բարութիւնը բարեպատեհութեամբ կրնայ հրաքսային սաստկութեամբ ժայթքիլ ու տարածուիլ: Չարտորանք դատելու մարդս:

Հշմարիտ հարստութիւնը կը կայանայ զայն զգուշօրէն ու խոհեմաբար գործածելու մէջ: Իրօք որ հարուստ է այն միտքը, որ իր ունեցածը գիտէ գործածել պատշաճօրէն: Հարուստ է այն սիրտը, որ բարութեամբ լեցուն է ու այդ է միայն որ կը սերմանէ, կը քարոզէ:

Արտաքին երետոյթով չխաբուինք, վասնզի անհամար հարուստ հոգիներ կան թաքնուած մաշած վերարկուներու ներքեւ: Բարեգործութիւնը իւրի նման կը հոսի և կը վարակէ զայլս եւս: Անդին, սակայն, ինչքան մարդիկ ալ կան, որոնք հարուստներու նմանելու իրենց բուռն ճիգին մէջ, ձ թիւնը, կ'եղծեն իրենց նկարագիրը և կ'այլափոխեն իրենց պատկերը: Մեծագոյն պատուէրներէն մէկը ներհայեցողութեամբ ինքզինք խորապէս ճանչնալ, կարողութիւնները չափել, իր տկարութիւնները մատնանշել և իր առաւելութիւնները աւելցնել է:

Մի ոմն ըսած է. «Եղիր այն ինչ կ'ուզես ըլլալ, և ոչ թէ՛ ինչ որ կ'ուզեն որ ուրիշներ ըլլաւ», քանզի այլոց ցանկութիւնները կրնան խոտոր համեմատիլ մեր բարոյական սկզբունքներուն հետ: Զօրաւոր անհատակութիւններ երբեք հողմերէ չեն տարուիր ու չեն հպատակիր այլոց կամքին, այլ իրենց պողպատեայ նկարագրով կանգուն ու անսասան կը մնան:

Այսօր աշխարհի մարդկութիւնը ծարափ է շարք մը Հշմարիտ հարստութեանց: Ան կարիք ունի խաղաղութեան, արդարութեան ու եղբայրութեան: Մարդկութիւնը կարիք ունի նաեւ

իր ականջը բանալու Աստուծոյ ձայնին, և խիղճը՝ մաքրելու: Ընդհանուր մարդկային կեանքի վերագնահատման ու արժէքաճշդման ճանապարհին, նախ և առաջ հարկ է ձերբազատուիլ մարդակործան արարքներէ, ինչպէս բռնապետութենէ, անիշխանութենէ ու սակաւապետութենէ (օլիկարխութիւն): Հշմարիտ հարստութիւն է ապրիլ անդորր կեանք, ուր չկայ բռնութիւն, արհաւիրք, հալածանք: Ի՞նչ արժէք ունի թռչունը ոսկեայ վանդակի մէջ, երբ ան դատապարտուած է սովի ու տանջամահութեան: Հշմարտապէս հարուստ է մարդը, երբ կ'ապրի ներդաշնակ կեանք՝ հեռու արժէքներու խախտումէն և ապա-բարոյականացումէ:

Մարդուն հարստութեան մաս կը կազմէ նաեւ իր յարաբերութիւնը իր նմանին հետ և սերտ գործակցութիւնը: Հակառակ արդի հաղորդակցութեան հզօրացման ու արագացման



միջոցներուն, մարդս դեռեւս կը տառապի անհաղորակցութենէ և կը մնայ մեկուսացած ու քաշուած իր պատեանին մէջ: Կոզիացումը հոգեպէս կը սնանկացնէ անհատը: Դրացիական և բարեկամական կապերը, որ ոսկեայ օղակով կը միաւորէին մարդկութիւնը, հետզհետէ կը թու-նան ներկայիս ու կ'անհետանան: Մարդը մարդուն հետ միայն մարդ է, առանձինը՝ կը դառնայ վայրենաբարոյ. այլ խօսքով, կը կոսնցնէ իր մարդկային ազնուագոյն յատկութիւնները և նկարագրագիծերը ու կ'այլասերի:

Հշմարիտ հարստութիւն չի գնուիր, վասնզի անգին է. ան լոկ ձեռք կը ձգուի:

Հշմարտապէս հարուստ է մարդը, երբ կ'ապրի ներդաշնակ կեանք՝ հեռու արժէքներու խախտումէն և ապա-բարոյականացումէ: